

# Դասարան

Դասարանում կա  $n$  նստարան, յուրաքանչյուր նստարան նախատեսված է երկու աշակերտի համար: Դասղեկը պարզել է, որ եթե մի նստարանին նստում են 2 տղա կամ 2 աղջիկ, ապա նրանք ավելի շատ են շեղվում դասից, քան այն դեպքում, երբ նստում են 1 տղա և մեկ աղջիկ: Իհարկե, իդեալականն այն է, որ յուրաքանչյուր նստարանին նստի մեկ աշակերտ: Բայց այդպես կարող են նստարանները չբավականացնել:

Հայտնի է դասարանում աղջիկների  $a$  քանակը և տղաների  $b$  քանակը: Լավագույն դասավորության դեպքում առավելագույնը քանի՞ աշակերտ քիչ կշեղվի դասից:

## Մուտքային տվյալներ

Մուտքում տրված են նստարանների  $n$  ( $1 \leq n \leq 20$ ) քանակը, աղջիկների  $a$  ( $1 \leq a \leq 40$ ) քանակը, տղաների  $b$  ( $1 \leq b \leq 40$ ) քանակը: Երաշխավորվում է, որ նստարանները բավականացնում են, որպեսզի բոլորը նստեն, այսինքն  $a + b \leq 2n$ :

## Ելքային տվյալներ

Ելքում պետք է արտածել մեկ թիվ՝ նստարաններին աշակերտների լավագույն նստեցման դեպքում այն աշակերտների քանակը, ովքեր չեն շեղվի դասից:

## Օրինակներ

Մուտք	Ելք
10 12 5	13